«Հայաստանում սոցիալական ներառման եվ ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում»

ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

2020 • 2023

**Ծրագրի նպատակն է՝** Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերում ավելի քան 11.000 խոցելի անձանց համար ընդլայնել տարաբնույթ սոցիալական ծառայություններից և սոցիալական աջակցության նպաստներից օգտվելու հնարավորությունները և խթանել նրանց ինքնազբաղվածությունը՝ սոցիալական դեպքի վարման պրակտիկայի լիարժեք ներդրման միջոցով:

Սոցիալական դեպքի վարման պրակտիկայի լիարժեք ներդրման միջոցով ծրագրի շահառու ընտանիքների համար հնարավորություն կստեղծվի հաղթահարելու այն խնդիրները, որոնք խոչընդոտում են եկամտի ինքնուրույն աղբյուր ունենալուն, մասնավորապես, ակտիվացնել նրանց՝ որոնելու աշխատանքի հնարավորություններ ազատ աշխատաշուկայում, օգնել նրանց վերամասնագիտանալ, ինչպես նաև զարգացնել սեփական ձեռնարկատիրական հմտությունները:

## ՆՇՎԱԾ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾՐԱԳԻՐԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է՝

- բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրում ընտանեկան նպաստի համակարգում գրանցված, ինչպես նաև ինչ որ պատճառով այդ համակարգից դուրս մնացած աղքատ ընտանիքներին՝ նրանց հետ աշխատող սոցիալական ծառայությունների աշխատակիցների կարողությունների հզորացման միջոցով:
- խորհրդատվական և ֆինանսական աջակցության տրամադրում ընտանեկան նպաստի համակարգում գրանցված շահառուներին՝ սեփական ձեռնարկատիրական գաղափարները կյանքի կոչելու նպատակով:

## ԾՐԱԳԻՐԸ ՈՐԴԵԳՐԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝

- շահառուների ակտիվացում,
- մանկական աղքատության հետ կապված խնդիրների առաջնահերթության առանձնահատուկ շեշտադրում,
- հասարակությունից մեկուսացված խմբերի ու ծայրահեղ աղքատության մեջ գտնվող ընտանիքների համար ներառականության ապահովում

THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

Government of Japan

JSDF Japan Social Development Fund

AASW
ARMENIAN ASSOCIATION OF SOCIAL WORKERS

# ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***11.200 շահառու**

**6,000 շահառու** կստանա հասանելիություն տարատեսակ կարիքահեն սոցիալական ծառայությունների




**5,000 շահառու** ներգրավվելու է ինքնազբաղվածության խթանման և զբաղվածության աջակցման ծրագրերում, որոնց թվում

**3,300 շահառու** կներգրավվի ինքնազբաղվածության և աշխատանքի տեղավորման տարատեսակ ծրագրերում

**1,400 շահառու** կստանա խորհրդատվություն
ա) սկսելու ձեռնարկատիրական գործունեություն
բ) ինքնազբաղվածության ծրագրերում ներգրավվելու վերաբերյալ

**300 շահառու** կստանա բիզնես նախագծերի իրականացման փոքր դրամաշնորհներ

**200 սոցիալական աշխատողներ**, որոնց թվում սոցիալական ծառայությունների դեպք վարողներ, համայնքային սոցիալական աշխատողներ և ՀԿ սոցիալական աշխատողներ

Սույն Ծրագիրը ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից՝ Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի (JSDF) միջոցով և իրականացվում է Համաշխարհային բանկի համակարգման ներքո: Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան Ծրագրի դրամաշնորհառուն է և հանդես է գալիս որպես ծրագիրն իրականացնող գործակալություն:

Սույն հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան, և այն որևէ ձևով չի կարող ընկալվել որպես Ճապոնիայի կառավարության տեսակետների արտահայտում:

*«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ-ն (հիմնադրվել է 2004թ.) ավելի քան 1000 սոցիալական աշխատողներ միավորող մասնագիտական կառույց է: Ասոցիացիայի հիմնական նպատակներն են՝ Հայաստանում սոցիալական աշխատանքի կրթության և պրակտիկայի զարգացումը, սոցիալական աշխատողների և նրանց շահառուների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին նպաստելը:*

**Միրա Անտոնյան**
Ասոցիացիայի Նախագահ
*ս.գ.թ., դոցենտ*

**Ռուբեն Մարկոսյան**
Ծրագրի ղեկավար
*տ.գ.թ., դոցենտ*

**www.aasw.org**
**info@aasw.org**
**+ 374 11 601 600**